## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/14-1

ք. Երևան                                                                                  02 -ը մարտ 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Չարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /Հավելված N3/:

1.2 Հաջորդող տարիներին նախատեսված Ապրանքի մատակարարումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական [illegible]ցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը [illegible]ել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում: Ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից այդ մասով միակողմանի կլուծվի: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ապրանքատեսակների մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծվի:

### 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ հետևյալ հասցեով. ՀՀ ՊՆ կենտրոնական պարենային բազա / ք. Երևան/:

2.3 Մատակարարված յուրաքանչյուր խմբաքանակի համար մատակարարի կողմից պետք է ներկայացվի որակը հաստատող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության լաբորատորիայի տրված եզրակացությունը

### 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքից և պահանջել վճարելու պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսականու վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսականուն համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.4 Սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.5 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժա ետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.6 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված տեսականու և որակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.3 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնման պայմանագրի առնվազն յոթանասունհինգ տոկոսն իրականացնել անձամբ՝ առանց գործակալության պայմանագիր կնքելու:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.4.12 Յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից 24 ժամ առաջ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել Պատվիրատուին՝ ապրանքի հանձման մասին pndepartament@mail.ru էլեկտրոնային հասցեով, նշելով՝ պայմանագրի ծածկագիրը, մատակարարվող ապրանքի անվանումը, քանակը և վայրը:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 7   39 375 (յոթ հարյուր ինսունմեկ միլիոն հարյուր երեսունինը հազար երեք հարյուր յոթսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: 230 379 375 ՀՀ դրամի Ապրանքը կմատակարարվի 2015թ., իսկ 560 760 000 ՀՀ դրամի Ապրանքը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

4.2 Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Գնորդի կողմից կատարվում է կանխավճար պայմանագրի գնի 130 000 000 ՀՀ դրամի չափով՝ 5 բանկային օրվա ընթացքում: Գնորդը վճարումը կատարում է՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումը կիրականացվի հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ/պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր անգամ նվազեցվող/կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամիսներում, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը

## 5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի պահանջներին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին կամ Ստացողին՝ Գնորդի ներկայացուցչի մասնակցությամբ, Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու(հաստատվելու) պահից /Հավելված N4/:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու(ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

ա.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

բ, Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսեների նախարարության հետ:

9.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.8 Սույն պայմանագիրը կազմված է 8 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 Հավելվածները՝ բաղկացած են ՛րթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.9 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ
ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010115510100
ՀՎՀՀ 01209339

Հ. ԶԱՐԴՅԱՆ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.Երշիկ կիսապխտած ԳՕՍՏ 16351-86: Պատրաստված տավարի կամ խոզի մսերից, խոնավությունը ոչ ավել քան 45%, վակումային փաթեթավորմամբ ներառյալ մինչև 0,5կգ ձողիկներով +/- 3% թույլատրելի շեղումով, տրամագիծը ոչ ավել 45-50 մմ-ից, յուրաքանչյուր երշիկի ձողիկի թաղանթի կարմիր ֆոնի վրա սպիտակ տառերով պիտակավորված լինի <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը, ստվարաթղթե արկղերով մինչև 10 կգ. տարողությամբ, Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 90 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.

**Երշիկեղենի փաթեթավորման արկղերի և յուրաքանչյուր երշիկի ձողիկի թաղանթի վրա պիտակավորված լինի՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության ժամկետը
4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Պահպանման ժամկետը
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո (երշիկեղենի փաթեթավորման վրա նշվում է միայն զտաքաշը)
7. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը
8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
9. Արկղերի վրայի գրառումները մակնաճշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
10. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:
11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
12. Արտադրող ձեռնարկության կողմից պարտադիր նշված լինի պահպանման և արտադրման ժամկետների վերաբերյալ գրառումները:

·ործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:

· ,,ւաքանչյուր խմբաքանակի համար ոչ արտադրող մատակարար կազմակերպությունների կողմից մատակարարման վայր պետք է ներկայացվի ձեռքբերման փաստաթուղթ, համաձայն ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի N168-Ն և 2012թ-ի սեպտեմբերի 20-ի 1259-Ն որոշումների պահանջների:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն |
| Հ/Հ 900011144079 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00867415 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | ՀՎՀՀ 01209339 |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | տնօրեն Հ. ԶԱՐԶՅԱՆ |

Հավելվա...
N ՇՀԱՊՁԲ-7/14-1 պայմանա...

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| h/h | Գնման առարկան | Չ/մ | Ընդհանուր քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Քանակը 2015թ-ի համար | Ապրանքի մատակարարումը 2015թ. ըստ ամիսների | | | | | | | | | Հաջորդող տարիներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | Քանակը | Մատակարարումը |
| 1 | Երշիկ կիսապխտած | կգ | 421 941 | 1875 | 791139375 | 122869 | 26869 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 299072 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում |

**Ընդամենը** 791 139 375 (յոթ հարյուր ինսունմեկ միլիոն հարյուր երեսունինը հազար երեք հարյուր յոթսունհինգ) ՀՀ դրամ

**Հավելված N 3**
**N ՇՀԱՊՁԲ-7/14-1 պայմանագրի**

### Վճարման ժամանակացույց

| h/h | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 25.12.2015թ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
| 1 | Երշիկ կիսապխտած | 130000000 | 159151750 | 158151750 | 168151750 | 177151750 | 186151750 | 195151750 | 204151750 | 213151750 | 230379375 | 230379375 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*  CPV կոդը՝ 15131122/1/4/3

:

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ [illegible] նախարարի տեղակալ-
ՆՏԱ [illegible]

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ
ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010115510100
ՀՎՀՀ 01209339

Հ. ՉԱՐՉՅԱՆ

Հավելված N 4
N ԾՀԱՊՁԲ-7/14-1 պայմանագրի

Վաճառող

______________________
______________________
______________________
______________________

գտնվելու վայրը ________
հհ ______________
______________
հվհհ ______________

Գնորդ

գտնվելու վայրը ________
հհ______________
______________
հվհհ______________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «________________» 20 թ.

Պ մանագրի անվանումը՝ ________________________________________________

________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Գնորդն՝ ի դեմս ________________________________________ և Վաճառողն՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը __________ 20___թ-ից __________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Մատակարարումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքն հանձնեց

______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ՇՀԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29.09.2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Չարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/14-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 243 581 250 **/երկու հարյուր քառասուներեք միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2015թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի №. 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900[illegible] | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՎՀՀ [illegible] | ՀՎՀՀ 01209339 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ- | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Հ. ՉԱՐՉՅԱՆ |

Հավելված N 1

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | ՉՄ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2016թ. ըստ ամիսների | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբերի 20-ը |
| 1 | [illegible] | կգ | 129 910 | 1875 | 243 581 250 | 7000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 11000 | 12910 |

[illegible] 243 581 250 /երկու հարյուր քառասուներեք միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ

[illegible]

Հավելված N 2

# Վճարման ժամանակացույց

*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների
բայց ոչ ուշ քան 25.12.2016թ

| Հ/հ | Գնման առարկան | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | 13125000 | 33750000 | 54375000 | 75000000 | 95625000 | 116250000 | 136875000 | 157500000 | 178125000 | 198750000 | 219375000 | 243581250 |

Վճարումները կատարվում են կուտակային եղանակով          CPV կոդը՝ 15131122/1/4/3

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 0086[illegible]
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՍՏԱ [illegible]

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ
ք.Երևան, Դավթաշեն 10 փող 71 տուն
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010115510100
ՀՎՀՀ 01209339
տնօրեն

Հ. ՉԱՐՉՅԱՆ

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ՇՀԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան                                                                                   **29.03.**2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Զարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/14 1 գնման պայմանագրի և 29.01.16թ. Համաձայնագիր №1 (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետով փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին:

1. **Փոփոխության առարկան**

2.

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 29.01.16թ. №1 Համաձայնագրում կատարել փոփոխություն. Մասնավորապես մարտից հունիս ընկած ժամանակահատվածում մատակարարման ենթակա 44 000 կիլոգրամ կիսապխտած երշիկի 1 կիլոգրամի գինը նվազեցնել և սահմանել 1845 ՀՀ դրամ, իսկ մնացած մատակարարման ենթակա քանակի մեկ միավորի գինը թողնել անփոփոխ: Սույն Փոփոխությունով Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է 242 261 250 /երկու [illegible] ՀՀ դրամ, **ներառյալ ԱԱՀ-ն:**

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները. Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 01209339 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Հ. ԶԱՐՉՅԱՆ |

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 2**
**№ ՇՀԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան

07 .04.2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Զարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/14-1 գնման պայմանագրի և 29.01.16թ. Համաձայնագիր №1 (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետով փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին:

1. **Փոփոխության առարկան**

2.

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և նախատեսել կանխավճար 169 582 875 /հարյուր վաթսունինը միլիոն հինգ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամի չափով, ընդ որում, Գնորդը սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | ք.Երևան, Դավթաշեն 10 փող 71 տուն |
| Հ/Հ 900011144079 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00867415 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | ՀՎՀՀ 01209339 |
| | տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Հ. ԶԱՐՉՅԱՆ |

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2**
**№ ՇՀԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 08.07.2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Մ. Հակոբյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Զարգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/14-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **44 280 000 /քառասունչորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 01209339 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Մ. ՀԱԿՈԲՅԱՆ | Հ. ԶԱՐԳՅԱՆ |

**Հավելված N 1**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հ/հ | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2016թ. ըստ ամիսների | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հուլիս | օգոստոս |
| 1 | Երշիկ կիսապխտած | կգ | 24 000 | 1845 | 44 280 000 | 12 000 | 12 000 |
| **Ընդամենը** | 44 280 000 /քառասունչորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ | | | | | | |

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական բազա: Յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումն իրականացվում է ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ խմբաքանակն ընդունող կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջագրի հիման վրա:

**Հավելված N 2**

## Վճարման ժամանակացույց

| հ/հ | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 25.12.2016թ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
| 1 | Երշիկ կիսապխտած | 22140000 | 44280000 | 44280000 | 44280000 | 44280000 | 44280000 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*   CPV կոդը՝ 15131122/1/4/3

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ
ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010115510100
ՀՎՀՀ 01209339

տնօրեն

Կ. ՉԱՐՉՅԱՆ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ՇՀԱՊՁԲ-7/14-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան

30 .01.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ապահովման դեպարտամենտի պետի ՊժԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Պրոդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Չարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/14-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Համաձայնագրով կողմերը որոշեցին մատակարարվելիք կիսապխտած երշիկ ապրանքատեսակի մեկ կիլոգրամի գինը նվազեցնել և սահմանել 1845 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **267 822 045 /երկու հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր քսաներկու հազար քառասունհինգ/ ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Էլիտ Պրոդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան,Դավթաշեն 10 փող 71 տուն |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 01209339 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊժԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ՉԱՐՉՅԱՆ |

Հավելված N 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հ/հ | Գնման առարկան | Չ/Մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ ամիսների | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր 17-ը |
| 1 | Երշիկ կիսապխտած | կգ | 145161 | 1845 | 267822045 | 23000 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 11500 | 18661 |
| **Ընդամենը** | | | | | 267 822 045 /երկու հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր քսաներկու հազար քառասունհինգ/ ՀՀ դրամ | | | | | | | | | | | |

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական բազա: Յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումն իրականացվում է ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում՝ խմբաքանակն ընդունողի կողմից մատակարարին ներկայացված հայտ-պահանջագրի հիման վրա:

Հավելված N 2

## Վճարման ժամանակացույց

| հ/հ | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 20.12.2017թ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվ | Մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
| 1 | Երշիկ կիսապխտած | 42435000 | 63652500 | 84870000 | 106087500 | 127305000 | 148522500 | 169740000 | 190957500 | 212175000 | 233392500 | 267822045 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով* CPV կոդը՝ 15131122/1/4/3

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ
ք.Երևան, Դավթաշեն 10 փող 71 տուն
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010115510100
ՀՎՀՀ 01209339

տնօրեն

Հ. ՉԱՐՉՅԱՆ